«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հավելված 1

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի

պետական ինստիտուտ» հիմնադրամի

Գիտական խորհրդի

2022 թվականի մայիսի 25 թիվ 116-Լ որոշման

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) Ներքին անվտանգության բաժնի (այսուհետ՝ Բաժին) հանդիսանում է Ինստիտուտի կառուցվածքային ստորաբաժանում, որն աշխատում է Բաժնի ղեկավարի անմիջական ղեկավարությամբ և հաշվետու է Ինստիտուտի ռեկտորին:
2. Բաժինն իր գործունեությունը իրականացնում է ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ, Ինստիտուտի կանոնադրությամբ, Ինստիտուտի կողմից ընդունված ներքին իրավական ակտերով և սույն կանոնակարգով:
3. Սույն Կանոնակարգով սահմանվում են Բաժնի նպատակը, խնդիրները, կառուցվածքը, իրավասությունները, բաժնի ղեկավարի և աշխատողների իրավունքները ու պարտականությունները և պատասխանատվության շրջանակը:
4. Բաժինը կարող է ունենալ կնիք և ձևաթուղթ:
5. Բաժինը վերակազմավորվում կամ լուծարվում է համաձայն Ինստիտուտի կանոնադրության:

2. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի **նպատակն է** Ինստիտուտին պատկանող բոլոր մասնաշենքերում ապահովել ներքին անվտանգությունը, անցագրային ռեժիմը, գույքի պահպանությունը:
7. Բաժնին **խնդիրներն են՝**
   1) Ապահովել Ինստիտուտի ներքին անվտանգությունը և անցագրային ռեժիմը:
8. Բաժնի **գործառույթներն են՝**
   1) Ապահովել Ինստիտուտի ներքին անվտանգությունը 24- ժամյա աշխատանքային գրաֆիկով
   2) Ապահովել Գործատուի կողմից սահմանված ներքին կարգապահական նորմերի պահպանումը
   3) Ապահովել Ինստիտուտի աշխատողների, ուսանողների անվտանգությունը
   4) Կանխել կասկածելի, նախապես չտեղեկացված անձանց և օտար մեքենաների մուտքը Ինստիտուտի վարչական շենքի տարածք
   5) Վերահսկել մեքենաների տեղաշարժը և կայանումը
   6) Արտակարգ իրավիճակներում անհապաղ ձեռնարկել համապատասխան միջոցներ և անմիջապես զեկուցել անմիջական ղեկավարին
   7) Ձեռնարկել համապատասխան միջոցներ կարգազանց ուսանողներին և այցելուներին կարգի հրավիրելու համար, անհրաժեշտության դեպքում կատարել բացատրական աշխատանքներ
   8) Տեսախցիկների միջոցով իրականացնել Ինստիտուտին պատկանող շինության և վերջինիս հարակից տարածքների անվտանգության վերահսկողություն
   9) Խիստ պահպանել տեսահսկման կանոնները, բացառել ինֆորմացիայի արտահոսքը և առաջնորդվել գաղտնիության սկզբունքով
   10) արձանագրել աշխատաժամանակի ընթացքում ի հայտ եկած անվտանգության հետ կապված խնդիրները, ինչպես նաև կասկածելի բոլոր գործողությունները և ըստ իրավիճակի անմիջապես կամ հերթափոխի ավարտին զեկուցել անմիջական ղեկավարին:

3. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

9. Բաժնի կառուցվածքը սահմանվում է Ինստիտուտի հաստիքացուցակով:
10. Բաժնի ղեկավարի և աշխատողների աշխատանքային իրավունքների և պարտականությունների շրջանակը սահմանվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, սույն կանոնակարգով, Ինստիտուտի ներքին իրավական այլ ակտերով, աշխատանքային պայմանագրերով և աշխատանքի նկարագրերով:
11. Բաժնի ղեկավարումը իրականացնում է բաժնի ղեկավարը՝ համաձայն Ինստիտուտի կանոնադրության, սույն կանոնակարգի և իրավական այլ ակտերի
12. Բաժնի ղեկավարին նշանակում և ազատում է Ինստիտուտի ռեկտորը:
13. Բաժնի ղեկավարը ենթակա և հաշվետու է Ինստիտուտի ռեկտորին:

4. ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԱՏԱԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

14. Բաժնի ղեկավարը և աշխատողները պարտավոր են պահպանել Ինստիտուտում գործող ներքին իրավական ակտերը, սահմանված ժամկետներում, բարեխղճորեն և պատշաճ հետևողականությամբ կատարել Ինստիտուտի ռեկտորի կողմից իրենց տրված հանձնարարականները և կարգադրությունները:
15. Բաժնի ղեկավարը և աշխատողները պատասխանատու են իրենց վրա դրված գործառույթների ժամանակին և պատշաճ կատարման համար:
16. Բաժնի ղեկավարը և աշխատողները իրենց վրա դրված պաշտոնեական պարտականությունները չկատարելու համար պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
17. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիությունը:
18. Բաժնի աշխատողների գործառութային պարտականությունները սահմանվում են պաշտոնի նկարագրերով:
19. Բաժնի աշխատողները պարտավոր են ապահովել իրենց ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում իրենց հատկացված գույքի և

հանդերձանքի վնասման կամ ոչնչացման համար կրում են պատասխանատվություն, որոշ դեպքերում՝ նաև փոխատուցում:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

20. Սույն Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ինստիտուտի Գիտական խորհրդի կողմից հաստատվելուն օրվան հաջորդող օրվանից:
21. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի որոշմամբ: